ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԲԱՐ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ժ. Բ. ԹՈՍՈՒՆՅԱՆ

Գրաբարի պատմության առաջին շրջանը, որ հայտնի է մեսրոպյան կամ դասական անուններով, ընգգրկում է V դ. առաջին կեսը։ Այդ շրջանից մեզ հասել են ինքնուրույն և թարգմանական բազմաթիվ գործեր։ Դասական գրաբարի հայ ինքնուրույն երկերն են Եղնիկ Կողբացու, Կորյունի, Փավստոս Բուզանդի և Ագաթանգեղոսի ստեղծագործությունները, որոնց լեզուն տարբերվում է հետդասական շրջանի մատենագրության լեզվից։ Դասական շրջանում, ինչպես նշում է պրոֆ. Գ. Ջահուկյանը, գրական և խոսակցական լեզուները հիմնականում համընկնում էին[1]։ Այդ պատճառով էլ այս շրջանի գրական լեզվի առանձնահատկությունների ուսումնասիրությունը շատ կարևոր է խոսակցական լեզվի օրինաչափությունները հասկանալու համար։ Ծտդասական շրջանում մասամբ լեզվի ներքին զարգացման, մասամբ էլ այլ լեզուներից կատարված փոխառությունների ու նորամուծությունների հետևանքով աստիճանաբար մեծանում են գրական և խոսակցական լեզուների տարբերությունները։ Այս հանգամանքը նկատի ունենալով՝ նախադրությունների ուսումնասիրության համար որպես աղբյուր ընտրել ենք դասական գրաբարի հայ ինքնուրույն մատենագրությունը։

Առարկաների և երևույթների միջև եղած հարաբերություններն արտահայտվում են առաջին հերթին հոլովների միջոցով։ Այդ հարաբերությունների մի մասն էլ արտահայտվում է այնպիսի բառերի միջոցով, որոնք գրաբարի քերականության մեջ կոչվում են նախդիրներ ու նախադրություններ և գրաբարում լայն կիրառություն են ունեցել։ Նշենք, որ հայ քերականները հենց սկզբից դրանք ընդունել են որպես առանձին խոսքի մաս, քննելով «նախադրություն» ընդհանուր անվան տակ։ Ելնելով նախադրությունների կատարած պաշտոնից՝ դրանք հետագայում բաժանվել են երկու տեսակի՝ հոլովակերտ (հոլով կերտող) և հոլովառու (հոլով առնող)[2], որոնց փոխարեն ավելի ուշ սկսեցին գործածվել նախդիր և նախադրություն անվանումները[3]։

Ե՛վ նախդիրները, և՛ նախադրությունները սպասարկու բառեր են, որոնք արտահայտում են քերականական զանազան հարաբերություններ։ Սակայն եթե նախդիրները կորցրել են իրենց բառական անկախությունը, ապա նախադրությունները հոլովական կապակցություններից դուրս էլ պահպանում են այն[4]։

---

1 Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացման փուլերը, Երևան, 1964, էջ 35, նույնի՝ Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 36։

2 Մ. Սարաստացի, Քերականություն գրաբար լեզվի հայկական սեռի, Վենետիկ, 1730, էջ 175։

3 Գ. Ավետիքյան, Քերականություն հայկական, Վենետիկ, 1815, էջ 101—102։

4 Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1952, էջ 298։

Մեր քերականներն ու լեզվաբանները նախադրությունների մասին խոսելիս նշել են դրանց արտահայտած հիմնական իմաստները միայն[5]։ Մենք փորձել ենք սահմանազատել նախադրությունների և որպես նախադրություն գործածվող բառերի բոլոր այն իմաստներն ու իմաստային նրբերանգները, որոնք դրսևորվել են վերոհիշյալ չորս հեղինակների գործերում։

Նախադրություններն արտահայտում են տեղի, ժամանակի, ձևի, պատճառի, նպատակի, վերաբերության, միասնության, բաղդատության, ընդդիմության, չափ ու քանակի և քերականական այլ հարաբերություններ։ Նրանք իրենց խնդիրների հետ միասին հանդես են գալիս մեծ մասամբ որպես պարագաներ, երբեմն էլ՝ որպես խնդիրներ։ Նախադրություններն արտահայտում են ավելի տարբերակված հարաբերություններ և այնպիսի իմաստներ, որոնք հնարավոր չէ արտահայտել միայն հոլովների միջոցով։ Ստորև կանդրադառնանք նախադրությունների և իբրև նախադրություն գործածվող բառերի կիրառություններին տրական, հայցական, բացառական և գործիական հոլովների հետ[6]։

Տրական խնդրով նախադրություններ— Մեսրոպյան շրջանի հայ ինքնուրույն մատենագրության մեջ տրական հոլովի հետ գործածվել են մի քանի նախադրություններ, ինչպես՝ առ ընթեր, դէպ, ի միջի, ճակառակ, ճանգոյն. միաբան, նման և այլն, որոնց մեծ մասը ածականներ են, բայց կիրառվում են նաև իբրև նախադրություն։ Դրանք հիմնականում արտահայտում են տեղի, վերաբերության, նմանության և այլ հարաբերություններ։

Առ ընթեր նախադրությունը սովորաբար գործածվում է նախադաս, արտահայտում է «մոտ», «կից», «կողմից» իմաստները և իր խնդրի հետ մեծ մասամբ լինում է տեղի պարագա։ Օրինակ՝ «Առ ընթեր նմա զհիւղն դնեն» (Եզն., էջ 25)[7]։ Հանդիպում է նաև ետադաս գործածությամբ։ Այս դեպքում առ նախդիրը դրվում է նաև խնդրից առաջ։ Օրինակ՝ «Ամպք... առ եթերացն առ ընթեր լցեալ ուռուցեալ... Զարարչին հրամանս կատարեն» (Ագաթ., էջ 283)[8]։

Դէպ նախադրությունը միշտ դրվում է նախադաս և ցույց է տալիս ուղղության հարաբերություն՝ «դեպի», «դեպի այն կողմը» նշանակությամբ։ Տվյալ շրջանի մատենագրության մեջ շատ սահմանափակ գործածություն ունի. Կորյունի, Ագաթանգեղոսի և Բուզանդի երկերում բոլորովին չի հանդիպում, իսկ Եզնիկի «Եղծ աղանդոցում» գործածված է միայն երկու անգամ։ Դրանք են՝ «Կայցէ արեգակն հանդէպ ձորոյն Գաբաւոնի, և լուսին դէպ դաշտին Էլոնայ» (Եզն., էջ 189)։ «Յորժամ կշիռ դէպ արեգական պատահիցէ՝ յայնժամ խաւարի արեգակն» (Եզն., էջ 201)։

Ուշ շրջանում գործածվում է դէպ ի կազմությամբ, որը խնդիր է վերցնում հայցական հոլովով։

Ի միջի նախադրությունը ընդհանրապես խնդիր է ընդունում սեռական հոլովով, բայց ստացական դերանունների մոտ, որոնց հետ ավելի շատ է գոր-

---

5 Հմմտ. Մ. Չամչյան, Քերականություն հայկազյան լեզվի, Վենետիկ, 1779, էջ 118—123։ Ա. Բագրատունի, Հայերեն քերականություն ի պետս զարդացելոց, Վենետիկ, 1852, էջ 119—130։ Ա. Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 302—305։

6 Սեռական խնդրով նախադրություններին անդրադարձել ենք մեկ այլ հոդվածում։

7 Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826։

8 Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909։

ծածվում, խնդիր է առնում նաև տրական հոլովով։ Առհասարակ դրվում է խնդրից առաջ և արտահայտում է հետևյալ իմաստները.

ա) «մեջ», «ներսում» (ներգոյականի նշանակությամբ) և իր խնդրի հետ դառնում է տեղի պարագա։ Օրինակ՝ «Երկիր... ի միջի իւրում ունի զջուրս» (Եղն., էջ 197)։

բ) «միջև» (այս դեպքում խնդիրը դրվում է հոգնակի թվով), օրինակ՝ «Մի՛ ոք լիցի դատաւոր ի միջի մերում» (Եզն., էջ 248)։

Հակառակ ածականը հաճախ գործածվում է որպես նախադրություն, որը լինում է և՛ նախադաս, և՛ ետադաս։ Ցույց է տալիս ընդդիմության հարաբերություն՝ «դեմ», «ընդդեմ», «հակառակ», «ներհակ» իմաստներով։ Օրինակ՝ «Զիք ինչ նմա հակառակ» (Եզն., էջ 13)։ «Եւ ոչ զոք ունի իւր հակառակ՝ թէ ինքն բարեաց արարիչ իցէ և միւսն չարեաց» (Եզն., էջ 144)։

Ընդդիմության իմաստը է՛լ ավելի ընդգծելու համար մատենագիրները երբեմն սրան զուգահեռ գործածում են նաև նրա ընդդէմ հոմանիշը։ Նման կիրառության հանդիպում ենք Բուզանդի մոտ, այսպես՝ «Իսկ ես ո՞վ եմ, զի աղաչես դու զիս, իբրև թէ ես այր մի տառապեալ կարիցեմ հակառակ ընդդէմ կամացն՝ զոր ինչ կամիցի առնել Աստուած՝ առնել առ նա աղօթս, զի այնու շրջիցեմ զկամս նորա» (Բուզ., էջ 164)[9]։

Հանգոյն, համեմատ, հաւասար, միաբան, նման ածականները ևս երբեմն, ինչպես արդեն նշվեց, գործածվում են իբրև նախադրություն, որոնք արտահայտում են բաղդատության, նմանության հարաբերություն՝ «պես», «նման», «համաձայն», «ըստ», «հավասար», «համեմատ» իմաստներով և իրենց խնդրի հետ հիմնականում դառնում են ձևի պարագա։ Ավելի հաճախակի հանդիպում ենք հանգոյն և նման նախադրություններին։

Վերոհիշյալ հինգ նախադրությունները քննարկվող մատենագիրների երկերում սովորաբար ունեն նախադաս գործածություն, բացառությամբ միաբան բառի։ Օրինակ՝ «Երկրորդն հանգոյն նմին պատուիրէ» (Կոր., էջ 76)[10]։ «Եւ տեսանելով քան զայլս գեղեցիկ, զանազան՝ որ համեմատ նմա այլ ոչ գտանէր» (Բուզ., էջ 43)։ «Ներքինիք... զանձինս իւրեանց արարին ներքինիս... լինել ի յարութեանն հաւասար հրեշտակաց» (Եղն., էջ 288)։ «Զի ոչ երբեք գտաւ նման նմա ի մէջ Յունաց աշխարհիս» (Ագաթ., էջ 88)։ «Ոչ հակառակ օրինացն ուսուցանէր, այլ նմին միաբան» (Եզն., էջ 278)։

Հանգոյն, հաւասար և նման նախադրությունները երբեմն խնդիր են առնում նաև սեռական հոլովով։ Օրինակ՝ «Հանգոյն սորա և կարապետն Յովհաննէս ասէր» (Ագաթ., էջ 187)։ «Զի ոչ ոք է առաջին քան զնա... և ոչ ընկեր հաւասար նորին» (Եզն., էջ 6)։ «Զի զգիտութիւն Տեառն ի մէջ անցուցեալ, նորա գիտութեամբ զնորա արարածս ճանաչել՝ նորա նման անուանեցաւ» (Ագաթ., էջ 137)։ Դրանք ունեն նաև ետադաս գործածություն, ընդ որում նման-ը Եզնիկի երկում գործածվել է 5 անգամ, որից երեքը՝ ետադաս։ Օրինակ՝ «Զի եթէ իւր որդի էր, նմին նման գոյր և նոյնպիսի» (Եզն., էջ 128)։ «Եւ երթայր հողմն ուռուցեալ լերինն հաւասար» (Ագաթ., էջ 424)։

Հեճուկի գոյականի հայցականը երբեմն հանդես է գալիս իբրև նախադրություն, որն արտահայտում է ընդդիմության հարաբերություն՝ «մեկին կամ մի

---

9 Փաւստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, ս. Պետերբուրգ, 1883։

10 Կորիւն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941։

բանի հակառակ», «ընդդեմ» նշանակությամբ։ Գործածվում է և՛ նախադաս, և՛ ետադաս։ Օրինակ՝ «Զի նմա այսպէս թուեցաւ՝ եթէ զայն չար ինչ կամացն հեթուկս Ներսիսի առնիցէ ի կենդանեաց առ մեռեալս, վասն թշնամութեանն» (Բուզ., էջ 194)։ «Եւ առ վայրենի բարուցն իւրոց՝ զոր ունէր յանձին իւրում, իբրև նմա հեթուկս առնելոյ, ութ հարիւր այր՝ որ կային ի կապանս առանց յանցման՝ ետ ածել առաջի նորա» (Բուզ., էջ 21)[11]։

Հայցական խնդրով նախադրություններ— Զգալի քանակությամբ նախադրություններ պահանջում են հայցական հոլովով խնդիր, ինչպես՝ անդր քան, առաւել քան, աւելի քան, արտաքոյ քան. դէպ ի. թող, իբր, իբրև, իբրու, հուպ, մեռ, մինչ, մինչև, մօտ. ուրպէս, ի սակս, քան, ի վեր քան. ի վերոյ քան. յառաջ քան, յառաջագոյն քան, նախ քան և այլն։ Դրանց մոտ կեսը, ինչպես ցանկից էլ երևում է, կազմված է քան-ով։ Իսկ քան բաղադրիչով կազմված բոլոր նախադրություններն էլ առհասարակ պահանջում են զ նախդիրը կրող հայցականով խնդիր։

Հուպ, մեռ, մինչ, մինչև, մօտ նախադրությունները վերցնում են տրականի իմաստ արտահայտող հայցականով խնդիր (նախդրիվ տրական), որոնց զուգահեռ գործածվում են առ. ի և զ նախդիրները։

Անդր քան նախադրությունը ունի նախադաս գործածություն, նշանակում է «այն կողմը», «ավելի այն կողմը» և իր խնդրի հետ դառնում է տեղի պարագա։ Օրինակ՝ «Զի չև ևս անդր քան զնա որ» (Ագաթ., էջ 180)։

Միատեսակ կիրառություն ունեն աւելի քան և առաւել քան նախադրությունները, որոնք դրվում են խնդրից առաջ և արտահայտում են «ավելի», «ավելի վեր», «ավելի բարձր», «գերազանց» իմաստները։ Օրինակ՝ «Նախ մարդ՝ որ առաւել քան զնոսա է» (Եզն., էջ 102)։ «Զայս և բազում և աւելի քան զսոյնս խօսեցաւ առաջի Արշակայ արքայի և առաջի ամենեցուն» (Բուզ., էջ 217)։

Արտաքոյ քան նախադրությունը գործածվում է միշտ նախադաս՝ «դուրս», «դուրս», «բարձր», «զատ», «հեռու» իմաստներով։ Օրինակ՝ «Գիտաց՝ թէ գոյ այլ աստուած արտաքոյ քան զնա» (Եզն., էջ 248)։ «Բայց Աստուած հոգի կենդանի է... արտաքոյ քան զամենայն ճառս» (Ագաթ., էջ 179)։

Նույն իմաստով կիրառվում է նաև արտաքս քան նախադրությունը։ Օրինակ՝ «Զի չիք ինչ արարած բանաւոր արտաքս քան զայս երիս ջոկս» (Եզն., էջ 97)։

Թող. իբրև նախադրություն գործածվելիս դրսևորում է բացառման հարաբերություն՝ «առանց», «բացի», «զատ», «չհաշված» նշանակությամբ. պահանջում է որոշյալ հայցականով խնդիր, որից միշտ առաջ է դրվում։ Օրինակ՝ «Եւ այլ յայսմ ազգաց և ի խոնարհ որ գործակալս անուն բարձիւք առաջի արքային պատիւ ի գլուխ բազմէին. թող զնահապետս մեծամեծս և զտանուտեարս՝ որք գործակալք միայն էին, ինն հարեւր բարձ՝ որ մտանէր ի ժամ տաճարին ուրախութեանն բազմակալացն կարգելոց. թող զոտնկայս գործակալութեանն սպասու» (Բուզ., էջ 57)։

Իբր, իբրև, իբրու, որպէս նախադրություններն արտահայտում են բաղդատության, նմանության հարաբերություն՝ «պես», «նման», «ինչպես», «որ-

11 Ըստ երևույթին, այսպիսի կիրառությունից է առաջացել հեթուկս առնեմ բայական հարադրությունը։

պես», «չափ», «մոտ» իմաստներով։ Բոլորն էլ ունեն նախադաս գործածություն։ Մեսրոպյան շրջանի ինքնուրույն մատենագրության մեջ ավելի հաճախ հանդիպում են իբրև և որպէս նախադրությունները, իսկ մյուսներն ունեն սահմանափակ գործածություն։ Օրինակ՝ «Զի ոմն զգայլոյ կորիւն սնուցանէ, և իբր ոչան կորիւնս՝ առ ընտելութեան ընդ անձն անկանին» (Եղն., էջ 69)։ «Եւ տեսին զօրսն Պարսից, զի ոչ գոյր թիւ բազմութեանն, զի էին իբրև զաստեղս երկնից, և իբրև դաւազ առ ափն ծովու» (Բուզ., էջ 17)։ «Եղէ ես որպէս զխուլ՝ որ ոչ լսէ, և իբրև զհամր՝ զի ոչ բանայ զբերան իւր» (Ագաթ., էջ 47)։

Այս նախադրությունները, որոնցով դրսևորվում է բացահայտյալ-բացահայտիչ հարաբերություն, նայած նախադասության այլ անդամների հետ ունեցած առնչության, կարող են խնդիր ստանալ նաև մյուս հոլովներով։ Այսպես՝

Ուղղական հոլովով. «Երկինք և երկիր անօթք նեղեալք են հաստատեալք յարարչէն... և լուսաւորքն իբրև ճրագունք լուցեալք» (Եղն., էջ 159)։ «Ես նմա բեր բարիս խորհեցայ որպէս հայր որդւոյ կատարել նմա, և նա ինձ չար ընդ բարւոյ հատոյց» (Բուզ., էջ 140)։

Սեռականով. «Սակայն և անդ իբրև ի վերայ որդւոց հատուցելոց հայրաբար դթացեալ բարեգործէ» (Ագաթ., էջ 147)։

Տրականով. «Իբրև արդարոյ արժան էր խորհել՝ թէ զի՞նչ օգուտ զի ես առնեմ» (Եղն., էջ 259)։ «Բաղում սպասաւորութիւն իբրև հաւասարի որդւոյ վարդապետին տանէր» (Կոր., էջ 60)։ «Թէ թշնամւոյն չաղօթես որպէս քեզ, ապա լաւ է չաղօթել» (Եղն., էջ 304)։

Բացառականով. «Զի ամենայն մարդ իբրև զհօրէ ի կարի առնէին զնմանէ» (Բուզ., էջ 218)։ «Գոչէ մարդարէն առ Հայր, իբրև յամենեցունց բերանոյ» (Ագաթ., էջ 321)։ «Աստուածասէրն յիւր կամացն որպէս ի թշնամւոյ զգուշանայ» (Եղն., էջ 299)։

Գործիականով. «Այլ փակեալ զերկինս իբրև սրահակաւ իմն» (Ագաթ., էջ 277)։ «Նախ կրթեաց քարոզովքն և մարդարէիւք՝ իբրև կաթամբ, և ապա եկն տա զկատարեալ վարդապետութիւնն» (Եղն., էջ 231)։

Միմյանց հոմանիշ են մեծ և մօտ նախադրությունները, որոնք ընդունում են առ կամ ի նախդիրներն ունեցող (առ-ը սովորաբար անձ ցույց տվող առարկաների անունների հետ, իսկ ի-ն՝ իր) հայցականով խնդիր և ցույց են տալիս.

ա) «մոտ», «մոտիկ» գաղափարը և իրենց խնդրի հետ դառնում են տեղի պարագա։ Օրինակ՝ «Եկեալ յիշելին մեծ ի թագաւորական քաղաքն» (Կոր., էջ 54)։ «Մօտ առ ինքն կոչեալ հարցանէր» (Բուզ., էջ 74)։

բ) ժամանակ՝ «մոտ», «մոտիկ» իմաստով և իրենց խնդրով դառնում են ժամանակի պարագա, օրինակ՝ «Մօտ ի վախճան յայն սերմանէ կոյս մի ծնանելոց է» (Եղն., էջ 142)։

Երբեմն մօտ նախադրությունը խնդիր է առնում նաև առ և ի նախդիրները կրող տրական հոլովով։ Այս դեպքում ցույց է տալիս տարածական հարաբերություն՝ դադար։ Օրինակ՝ «Եւ բանակ գօրացն Յունաց բանակեալ էր անդէն մօտ առ բանակին Հայոց արքային» (Բուզ., էջ 195)։ «Եւ անդ ոչ ինչ յետ բաղում աւուրց հանգեաւ, և եդաւ մօտ առ Գրիգորի և ընդ հարս իւր» (Բուզ., էջ 28)։

Այն հանգամանքը, թե մօտ և մեծ նախադրությունները հոմանիշ են, երևում է նաև նրանից, որ դրանք երբեմն գործածվում են նախադասության հա-

մազոր անդամների հետ։ Օրինակ՝ «Եւ ածին փոս զբանական իւրեանց մօտ ի լեառնն ի Նպատ մերձ ի գետն Եւփրատ» (Բուզ., էջ 161)։

Մօտ նախադրությանը զուգահեռ երբեմն գործածվում է մինչև-ը, օրինակ՝ «Եւ եկն էջ եհաս մինչև մօտ ի յատակս երկրիս» (Ագաթ., էջ 383)։

Մինչ և մինչև նախադրությունները պահանջում են առ. ի և ց նախդիրներ կրող հայցական հոլովով խնդիր, ցույց են տալիս տարածական կամ ժամանակային հարաբերություն՝ «մինչև» իմաստով և լինում են տեղի կամ ժամանակի պարագա։ Մինչև-ը ավելի հաճախակի է հանդիպում, քան մինչ-ը։ Օրինակ՝ «Ի Տարօն հասուցանէին մինչ ի բուն գիւղն յԱշտիշատ» (Կոր., էջ 88)։ «Կարգ թագաւորացն Յուդայ ձգեցաւ մինչեւ ցմակաբէացիոն» (Եզն., էջ 160)։

Երբեմն մինչև նախադրությունը ցույց է տալիս ժամանակային այնպիսի հարաբերություն, ուր նշվում են սկիզբն ու վերջը։ Ըստ որում սկզբնակետը նշող անդամը միշտ դրվում է բացառական հոլովով։ Օրինակ՝ «Ի մահուանէն Գնելոյ մինչև յայն ժամանակն թագաւորութեանն Պապայ ոչ էր երթեալ նա ի բանակն արքունի» (Բուզ., էջ 156)։ «Որ առաջնորդեաց մեզ ի մանկութենէ մերմէ մինչև յօրս և ի ժամս յայս» (Ագաթ., էջ 92)։

Նշեցինք, որ առ նախդիրը գործածվում է անձ ցույց տվող առարկաների անունների հետ։ Բայց երբեմն հանդիպում ենք ի նախդրի գործածության՝ առ-ի փոխարեն։ Օրինակ՝ «Առ հասարակ կլանէր յԱդամայ մինչև ի Մովսէս» (Ագաթ., էջ 175)։

Սակս նախադրությունը դրվում է իր խնդրից հետո և արտահայտում է նպատակի կամ պատճառի հարաբերություն՝ «համար», «նպատակով» կամ «պատճառով» իմաստներով։ Իր խնդրի հետ միասին դառնում է նպատակի կամ պատճառի պարագա։ Մեսրոպյան շրջանի ինքնուրույն մատենագրության մեջ սակս ձևով չի հանդիպում, այլ՝ ի սակս կազմությամբ, այն էլ՝ յայն սակս, յոր սակս կապակցություններում։ Օրինակ՝ «Վասն զի անտեւական են մարմինք՝ յայն սակս մեռանին» (Եզն., էջ 73)։ «Յոր սակս և հարքն մեր սուրբ եպիսկոպոսք սահմանեցին կանոնս» (Եզն., էջ 287)։ Առաջին նախադասության մեջ նախադրությունը ցույց է տալիս պատճառի, իսկ երկրորդում՝ նպատակի հարաբերություն։

Գրաբարի ամենագործածական նախադրություններից մեկն է քան-ը։ Այսպես, օրինակ, Եզնիկի երկում սրան հանդիպում ենք 107 անգամ, Ագաթանգեղոսի «Պատմություն Հայոցում»՝ 88, Փ. Բուզանդի երկում՝ 71, իսկ Կորյունի երկում՝ 6 անգամ։ Դրվում է միշտ նախադաս, վերցնում է որոշյալ (նաև՝ անորոշ) հայցականով խնդիր և արտահայտում է.

ա) բաղդատական հարաբերություն՝ խնդրի համեմատությամբ ավելի կամ պակաս։ Օրինակ՝ «Գտանի հիւղն մեծ քան զնա» (Եզն., էջ 23)։ «Որ և մարդ իսկ է, և վատթարագոյն քան զամենայն մարդիկ» (Եզն., էջ 253)։

բ) «նման», «պես», «չափ» իմաստները, օրինակ՝ «Ասիցէ թէ քան զհողմս թեթեւք են» (Եզն., էջ 90)։

Քան-ը առաւել, աւելի, արտաքոյ, արտաքս, անդր, ի ներքոյ, ի վեր, ի վերոյ, յառաջ, յառաջագոյն, նախ և այլ բառերի հետ կազմում է հարադրություններ, որոնք կիրառվում են նաև իբրև նախադրություն։ Դրանցից մի քանիսին անդրադարձել ենք վերևում, իսկ ստորև կանգ կառնենք մյուսների վրա։

Ի ներքոյ քան. դրվում է խնդրից առաջ և նշանակում է «ներքև», «ավելի ներքև» ու իր խնդրի հետ դառնում է տեղի պարագա։ Օրինակ՝ «Եւ է մարմին ի վերոյ քան զերակսն արեանն և ի ներքոյ քան զերակսն» (Եզն., էջ 197)։ Ինչպես այս օրինակից էլ երևում է, սրան հականիշ է ի վերոյ քան նախադրությունը, որն արտահայտում է «ավելի վեր», «ավելի բարձր» գաղափարը։ Օրինակ՝ «Եւ արկ զաթոռ նորա ի վերոյ քան զբազումս ի նոցանէ, որք ի սինհոդոսին յայն էին» (Բուզ., էջ 23)։

Ի վեր քան. ունի նախադաս գործածություն և նշանակում է «ավելի վեր», «ավելի բարձր», «գերազանց»։ Օրինակ՝ «Ապա թէ անկատար էր, յայտ է, թէ էր ոմն ի վեր քան զնա» (Եզն., էջ 118)։

Յառաջ քան, յառաջագոյն քան, նախ քան նախադրությունները միմյանց հոմանիշ են. դրվում են խնդրից առաջ և դրսևորում իմաստային հետևյալ երանգները.

ա) «առաջ», «ավելի առաջ» (ժամանակի իմաստով)։ Օրինակ՝ «Զոր յառաջ Քան զամենայն ինչ ասեն» (Եզն., էջ 117)։ «Որ յառաջագոյն քան զչարչարելն ճաշակեալ լինի» (Ագաթ., էջ 229)։

բ) «նախ քան», ինչպես՝ «Եւ զայս աղօթս մատուցանէր երէցն յառաջ քան զմատուցանելն պատարագին» (Բուզ., էջ 189)։ «Զոր յառաջ քան զյաւիտեանս սահմանեաց Աստուած ի փառս մեր» (Ագաթ., էջ 363)։

գ) բացառում, օրինակ՝ «Ընտրեաց զմեզ յառաջ քան զլինելն աշխարհի» (Եզն., էջ 171)։ «Զքրիստոսի մասն կարօտեալ եղբօրն տուր նախ քան զքո ճաշակելն» (Եզն., էջ 307)։

Երբ նախադրությանը հաջորդում է մի այլ նախդիր, զ-ն չի դրվում։ Այս երևույթը իր ժամանակին նկատել է հայ անվանի քերական Չալըխյանը[12]։

Բացառական խնդրով նախադրություններ— Մեսրոպյան շրջանի ինքնուրույն մատենագրության մեջ բացառական հոլովով խնդիր են վերցնում հետևյալ նախադրությունները՝ բաց, բայց, ի բացագոյն, ի բացեայ, գաղտ, զանխուլ, զատ, ընդհատ, հեռի, հետէ, մեկուսի, որիշ, ուրոյն, ի վեր և այլն։

Բաց և բայց նախադրությունները ունեն նման կիրառություն. դրվում են խնդրից առաջ և արտահայտում են բացառման հարաբերություն՝ «բացի», «զատ», «առանց» իմաստներով։ Օրինակ՝ «Ի խնդիր արկանէր՝ զնոյն գոյն ձի, զնոյն նշան, գնոյն պատկեր, բաց ի մեծութենէ՝ չի այնչափ ուրեք ոչ գտանէր» (Բուզ., էջ 43)։ «Ասէ. Ադամ, ես եմ աստուած, և չիք այլ ոք. և բայց յինէն այլ աստուած քեզ մի՛ լիցի. ապա թէ ունիցիս զոք այլ աստուածս բայց յինէն, գիտասջիր զի մահու մեռանիցիս» (Եզն., էջ 245)։

Նման կիրառություններում ի նախդիրը չպետք է վերագրել նախադրությանը, այսինքն՝ դա հարադրություն չէ, որովհետև գրաբարում բացառական հոլովը առանց ի նախդրի չի գործածվում (ի-ն բացառականի հոլովակազմիչն է)։ Բայց միևնույն ժամանակ պետք է նկատել նաև այն, որ աշխարհաբարի բացի կապը առաջացել է այսպիսի կիրառությունից։

Իբրև նախադրություն հանդես է գալիս նաև բայց միայն հարադրությամբ, որն ունի նույն կիրառությունը, ինչ նախորդները։ Օրինակ՝ «Ամենայն կառք ի-

12 Չալըխյան, Քերականություն հայկազնյան լեզվի, Վիեննա, 1885, էջ 449։

համազգեաց երիվարաց լծին, բայց միայն այոց[13] կաւաց» (Եզն., էջ 17)։ «Արարին զամենայն ծողովուրդս երկրին Հայոց իբրև կարգ միաբանութեան վանականաց համաշխարհի, բայց միայն յամուսնութեան օրինացն» (Բուզ., էջ 63)։

Բաց բառից են կազմվել ի բացեայ և ի բացագոյն մակբայները, որոնք երբեմն գործածվում են նաև իբրև նախադրություն՝ «հեռու», «ավելի հեռու» նշանակությամբ։ Օրինակ՝ «Որ կայ դէմ յանդիման լերինն մեծի... ի բացինն տեղւոջէ ի բացագոյն իբրև քարընկէց մի ի ներքոյ կուսէ» (Բուզ., էջ 33)։

Գաղտ նախադրությունը ունի և՛ նախադաս, և՛ ետադաս գործածություն, արտահայտում է «գաղտնի», «գաղտուկ», «ծածուկ» գաղափարը և իր խնդրով դառնում ձևի պարագա։ Օրինակ՝ «Այլ մանուկն Արտաւազդ ի Մանուէլէ գաղտ եկեալ էր ի Հակատն» (Բուզ., էջ 215)։

Ի բացագոյն և գաղտ բառերը վերոհիշյալ օրինակներում ունեն նաև մակբայական երանգ։

Նույն իմաստով և կիրառությամբ հազվադեպ հանդես է գալիս գանիուլ նախադրությունը։ Օրինակ՝ «Այլ մանուկն Արտաւազդ... վառեցաւ կազմեցաւ և եմուտ, գանիուլ ի մանուէլեան գնդէն, առ ամն Եփրատ գետոյն» (Բուզ., էջ 215)։

Զատ նախադրությունը միշտ գրվում է նախադաս և ցույց է տալիս բացառման, առանձնացման հարաբերություն՝ «բացի», «զատ», «առանց», «առանձին», «անջատ» իմաստներով, այսինքն՝ հոմանիշ է բաց կամ բայց նախադրություններին։ Օրինակ՝ «Զի եթէ կարող ոք ինչ էր, նախ իւր տեղիս զատ ի նմանէ առներ» (Եզն., էջ 71)։ «Ոչ հաւատային ընդանիք նորա մահուն նորա, թէպէտ և տեսանէին զդլուխ նորուն զատ ի մարմնոյն անտի» (Բուզ., էջ 200)։

Ընդհատ ածականը հազվադեպ գործածվում է իբրև նախադրություն և ցույց է տալիս տարբերակման, առանձնացման հարաբերություն՝ «առանձին», «տարբեր» նշանակությամբ։ Օրինակ՝ «Թէպէտ բիւրապատիկ յանուն օտարին... զոր բարերարն կոչեն՝ ապաւինիցին, չեն ինչ ընդհատ ի հեթանոսաց» (Եզն., էջ 252)։

Հեռի նախադրությունը ավելի շատ հանդիպում է նախադաս գործածությամբ, նշանակում է «հեռու» և հականիշ է մօտ նախադրությանը։ Օրինակ՝ «Յորմէ աստուածականն հեռի՝ որ ի վեր է» (Եզն., էջ 123)։

Հետէ. իբրև նախադրություն գործածվում է ի հետէ կապակցության ձևով, որի նախդիրը դրվում է խնդրից առաջ, իսկ հետէ բաղադրիչը՝ հետու։ Արտահայտում է ժամանակային հարաբերություն՝ «հետո», «նրանից հետո», «ի վեր» իմաստներով և իր խնդրի հետ լինում է ժամանակի պարագա։ Օրինակ՝ «Զոր ի նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ միամտութեամբ առ ձեզ արշակունիս վաստակեալ եմք» (Բուզ., էջ 203)։ «Որ ի նախնեացն հետէ մոլորեալ դանդաչեցին» (Ագաթ., էջ 259)։

Մեկուսի բառը, բացի ածականական և մակբայական կիրառությունից, գործածվում է նաև իբրև նախադրություն։ Դրվում է խնդրից առաջ և արտահայտում «մի կողմ», «հեռու», «զատ», «առանձին» իմաստները։ Իր խնդրի

---

13 Տվյալ հրատարակությունում առանց ի (ւ) նախդրի է, որը հավանաբար տպագրական վրիպակ է։

հետ միասին լինում է տեղի պարագա։ Օրինակ՝ «Ապա բռնադատեաց զնա Յոհան, իջոյց ի ձիոյ անտի. և առ տարաւ զնա մեկուսի ի մանապարհէն» (Բուզ., էջ 226)։

Սահմանափակ գործածությամբ որպես նախադրություն հանդես են դալիս նաև որիշ, ուրոյն մակբայները, որոնք դրվում են իրենց խնդրից հետո և արտահայտում են «զատ», «մեկուսի», «առանձին», «առանց», «բացի» իմաստները։ Օրինակ՝ «...բերիցէ... և թուղն զտեսիլ իւրոյ տերևոյն և զարար կեղևոյն և զտարր մրգոյն ի նմանէ որիշ. և այլքն ի նմանէ ուրոյնք» (Ագաթ., էջ 330)։

Երբեմն ուրոյն նախադրությանը հավելագրվում է առանց-ը, որտեղ խընդիրն ստանում է ուրոյն-ը։ Օրինակ՝ «Իսկ մեզ կարևորքն առանց ուրոյն ի մարդկան աղանդէն չիք հնար լինել» (Բուզ., էջ 78)։

Ի վեր միջտ դրվում է խնդրից հետո և արտահայտում է «վեր», «վերև», «ավելի վեր», «ավելի բարձր» իմաստները։ Օրինակ՝ «Եդ կրօնս Պիթագորաս... ի լուսնոյ և ի վեր զամենայն ինչ որ է՝ անմահ համարել» (Եղն., էջ 204)։ «Կարի անարժան գործ էր, և ի լուսնոյ ի վեր զամենայն ինչ անմահ համարելս (Եղն., էջ 223)։

Գործիական խնդրով նախադրություններ— Գրաբարում գործիական հոլովով խնդիր են ընդունում զառաջեաւ[14], հանդերձ, շուրջ, չափ և այլ նախադրություններ։ Բացի դրանցից, մի քանի այլ նախադրություններ (ինչպես՝ իբր, իբրև, որպէս և այլն), իրենց հիմնական խնդրառությունից զատ, խնդիր են վերցնում նաև գործիական հոլովով։

Զառաջեաւ նախադրությունը ունի նախադաս գործածություն, արտահայտում է «առջևը», «դեմը», «դիմաց» իմաստները և իր խնդրի հետ լինում է տեղի պարագա։ Օրինակ՝ «Զեռնասուն էր սա եպիսկոպոսապետին Ներսէսի, զառաջեաւ իւրով զսա էր սնուցեալ» (Բուզ., էջ 89)։

Նույն կիրառությամբ գործածվում է նաև զառաջեւ ձևով։ Օրինակ՝ «Եւ ետ ածել զԱրշակ արքայ Հայոց զառաջեւ իւրով» (Բուզ., էջ 141)։

Ետադաս գործածության ժամանակ զ նախդիրը անջատվում է բառից և անցնում խնդրից առաջ, իսկ առաջև բաղադրիչը դրվում է խնդրից հետո, այսպես՝ «Եւ հրամայէր զնա կապել զիւրով առաջև» (Բուզ. էջ 59)։

Տվյալ շրջանի մատենագրության մեջ այդպիսի գործածության հանդիպում ենք Բուզանդի մոտ։

Զառաջեաւ-ին հոմանիշ են առաջի և յանդիման նախադրությունները, որոնք խնդիր են վերցնում սեռական հոլովով։ Օրինակ՝ «Եւ ածին զԳրիգորիոս առաջի թագաւորին» (Ագաթ., էջ 30)։ «Յայնժամ հրաման ետ, և ածին զՏրդատիոս յանդիման թագաւորին» (Ագաթ., էջ 28)։ «Ապա կոչեն զՄուշեղ զառաջեաւ արքային» (Բուզ., էջ 163)։

Հանդերձ. գրաբարի ամենատարածված նախադրություններից մեկն է։ Ունի և՛ նախադաս, և՛ ետադաս գործածություն։ Արտահայտում է միասնության գաղափար՝ «հետ», «միասին», «հանդերձ», «մեկտեղ» նշանակությամբ և իր խնդրի հետ դառնում միասնության պարագա։ Իր ցույց տվող բառերի հետ գործածվելիս՝ արտահայտում է գործիական հոլովի իմաստ։ Օրինակ՝ «Հնազանդելոց է փրկչին մերում հանդերձ մահուամբ և սատանայ» (Եղն., էջ 184)։ «Զոր առեալ Վահանայ և Հմայեկի... հանդերձ աշխարհական ամբոխիւ... յՕ-

14 Սա խնդիր է ստանում նաև սեռական հոլովով։

շական ելանէին» (Կոր., էջ 94)։ «Հանդերձ սաղմոսիւք և օրհնութեամբ, կանթեղիւք վառելովք և մեծապաշամամբք և բազում յիշատակօք զսուրբն յուղարկեցին» (Բուզ., էջ 184)։ «Զի Հայր ինձ վկայէ Հողւովն հանդերձ ճշմարտութեամբ» (Ագաթ., էջ 223)։ «Եւ յետ առնելոյ զաշխարհս ել ինքն զօրօքն հանդերձ յերկինս» (Եզն., էջ 243)։

Հանդերձ նախադրության շարադասության համար օրինաչափություն գտնելը դժվար է, որովհետև մի մատենագիր գերադասում է նախադաս գործածությունը, իսկ մյուսը՝ ետադաս։ Ագաթանգեղոսի երկում գործածված 86 դեպքից 61-ը ետադաս է, 25-ը՝ նախադաս, Կորյունի «Վարք Մաշտոցում» 33-ից 30-ը նախադաս է, 3-ը՝ ետադաս, Բուզանդի գրքում 85-ը նախադաս է, 19-ը՝ ետադաս, իսկ Եզնիկի երկում 4-ը նախադաս է, 2-ը՝ ետադաս։

Բուզանդի մոտ սրան մի անգամ հանդիպում ենք սեռական խնդրով, այսպես՝ «Ըստ հաւատոցն ձերոց բժշկէ զսա Քրիստոս ծնունդ Աստուծոյ, և բարեմիտ ողջանդամ յարիցէ նա առաջի քո, և հանդերձ արքայութեանն նորոգութեանն՝ անմահութեանն յաւէրժ բարեաց ևս արժանի արասցէ զձեզ» (Բուզ., էջ 73)։

Եռմեսրոպյան շրջանի մատենագրության մեջ գործածվում է ոչ միայն սեռական, այլև տրական խնդրով։

Շուրջ. սա ևս գրաբարի հաճախակի գործածվող նախադրություններից է։ Պահանջում է զ նախդիրը կրող գործիական հոլովով խնդիր, որից առաջ է դրվում և արտահայտում է տարածական հարաբերություն՝ «շուրջը», «չորս կողմը» նշանակությամբ։ Իր խնդրի հետ լինում է տեղի պարագա։ Օրինակ՝ «Բակ առեալ ծրանայ շուրջ զնովաւ» (Եզն., էջ 187)։ «Եւ նստան շուրջ ղբերգաւն ամիսք երեքտասան» (Բուզ., էջ 144)։ «Փուշքն ի բում յարութեանն շուրջ ղքև բուսանիցին» (Ագաթ., էջ 337)։

Չափ գոյականը երբեմն գործածվում է իբրև նախադրություն, դրվում է խնդրից հետո և արտահայտում է բաղդատական հարաբերություն՝ «պես», «չափ» իմաստներով։ Իր խնդրի հետ լինում է ձևի կամ չափի պարագա։ Օրինակ՝ «Որք... մահու չափ վասն կենդանի յուսոյն... մատնեցին զանձինս ի կորուստ մարմնոց» (Եզն., էջ 240)։ «Պարտ է կրօնաւորին արեամբ չափ հակառակ կալ ընդդէմ մարմնական ցանկութեանց» (Եզն., էջ 310)։

Նախադրությունների ուսումնասիրությունը հանգեցնում է հետևյալ եզրակացություններին.

ա) դասական գրաբարով հայ ինքնուրույն մատենագրության մեջ տրական, հայցական, բացառական և գործիական հոլովների հետ գործածվել են շուրջ հինգ տասնյակ նախադրություններ և իբրև նախադրություն հանդես եկող բառեր։

բ) Դրանց մի մասը իր խոսքիմասային հիմնական և սկզբնական արժեքով պատկանում է այլ խոսքի մասերի (ածական, մակբայ, գոյական, բայ), որոնք երկրորդաբար կիրառվում են նաև որպես նախադրություններ, ինչպես՝ կից. հակառակ, համաձայն. համեմատ. հաւասար, միաբան. նման, հեռուկս. թող. հուպ, ի սակս, յայն սակս, յոր սակս. գաղտ, զանխուլ, ընդհատ, մեկուսի. մերկ. որիշ, ուրոյն, չափ և այլն։

գ) Եզնիկի, Կորյունի, Բուզանդի և Ագաթանգեղոսի երկերում հիշյալ նախադրություններն ու իբրև նախադրություն գործածվող բառերը հիմնականում ունեն նախադաս գործածություն։

УПОТРЕБЛЕНИЕ ПРЕДЛОЖНЫХ СЛОВ В ОРИГИНАЛЬНОЙ ЛИТЕРАТУРЕ НА КЛАССИЧЕСКОМ ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Ж. Б. ТОСУНЯН

Резюме

В трудах древнеармянских авторов V в. Езника Кохбаци, Фавста Бузанда, Корюна и Агафангелоса встречаются следующие предложные слова: առ ընթեր, ղէպ, ի միջի, հակառակ, հանգոյն, միաբան, նման (с дательным падежом); ղէպ ի, թող, իբր, իբրև, հուպ, մեր, մինչ, մինչև, մօտ, որպէս, ի սակս, համ (с винительным падежом); բաց, բայց, զաղտ, զանխուլ, զատ, հեռի, հետէ, մեկուսի, որիշ, ի վեր (с отложительным падежом); զառաջեաւ, հանդերձ, շուրջ, չափ (с творительным падежом) и т. д.

Эти предложные слова выражают отношения места, времени, причины, цели, сравнения, сопоставления, отрицания, образа действия, меры, количества и т. п., что подтверждается соответствующими примерами из произведений вышеуказанных авторов.